

## Իսրայելի տարօրինակ կենակիցը

Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում իսրայելական զենքերը որոշիչ կերպով նպաստել են Ադրբեջանի հաղթանակին. դա վրդովմունք է հարուցում:

### Ուլրիխ Շմիդտ, Թեյ Ավիվ

Ուշադիր դիտորդները Լեռնային Ղարաբաղում պատերազմի օրերին վկայել են հարավիսրայելական՝ Նեգևում գտնվող Օվդա ռազմական օդանավակայանի և Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվի միջև օդային աշխույժ հաղորդակցության մասին: Հետևությունը պարզ է. Իլհամ Ալիևի ռեժիմն Իսրայելում Հայաստանի դեմ պատերազմի համար ալիմենտ է ապահովել, այնպես, ինչպես նա դա տարիներ ի վեր անում է՝ ըստ երևույթին հաջողությամբ: Իսրայելից և Թուրքիայից բերված զենքերով Ադրբեջանը Հայաստանին ջախջախիչ պարտության է մատնել:

Չնայած Իսրայելի պաշտոնական ասյաններն այդ մասին լռում են, բայց փաստերը հնարավոր չէ ժխտել: Ստոկհոլմի «Sipri» ինստիտուտի տվյալներով՝ վերջին հինգ տարիների ընթացքում 740 միլիոն դոլարի զենք վաճառելով Ադրբեջանին՝ Իսրայելը նրա կարևորագույն՝ զինամատակարարն էր: Ռուսաստանը, որը զինում է նաև Հայաստանին, հաջորդում է երկրորդ տեղում: Նախագահ Ալիևը 2016 թ. դեկտեմբերին լրագրողների առջև ասաց, որ իր երկիրը իսրայելական ընկերություններում պատվիրել է համարյա 5 միլիարդ դոլար արժողության «պաշտպանական սպառազինություն»: Նեթանյահուն նստած էր Ալիևի կողքին և գոհ ժպտում էր: Իսրայելցիների վաճառքի ամենագնայուն ապրանքն անօդաչու թռչող սարքերն են, այդ թվում՝ պետական «Aerospace» սպառազինության կոնցեռնի Industrie»-ի «Harop»-ը: Այն անվանվում է նաև «Կամիկաձե-ԱԹՍ», քանի որ կարող է թիրախում պայթեցվել: Դեռ 2015 թ. Բաքվում կազմակերպված մի գորահանդեսում ցուցադրվել էին իսրայելական ԱԹՍ-ներ: Ալիևը հաստատեց 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմում դրանց կիրառությունը և գովաբանեց ճշգրտությունը: 2018 թ. կարելի էր տեսնել նաև «Tavor» տեսակի գրոհային զենքեր:

Իսրայելի վարքագիծը Հայաստանում դժգոհություն է հարուցել: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը մերժեց Երուսաղեմի կողմից Հայաստան մարդասիրական օգնություն ուղարկելու առաջարկը՝ ակնարկելով, որ նա Ադրբեջանում համագործակցում է «Թուրքիայի, ահաբեկիչների և սիրիացի վարձկանների» հետ: Միջազգայնորեն չճանաչված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահը՝ Արայիկ Հարությունյանը, գտնում էր, որ Իսրայելը փաստացիորեն հանցակից է ցեղասպանության մեջ: Երևանը հոկտեմբերի սկզբին՝ Իսրայելում առաջին անգամ Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության հիմնումից ընդամենը երկու շաբաթ անց, Թել Ավիվից հետ կանչեց իր դեսպանին:

### **Անվտանգություն Թեհրանի նկատմամբ**

Հայերի գայրույթը կարելի է հասկանալ: Իսրայելը զինում է մուսուլմանական երկրի՝ Երկրի՞, որը հարձակվում է քրիստոնյա հայերի՝ օսմանյան ցեղասպանության զոհերի վրա: Եվ դա այդպես է: Խորհրդային Միության փլուզումից ի վեր Իսրայելն ու Ադրբեջանը համերաշխ են միմյանց հետ: Երկու երկրներն էլ Իրանը համարում են սպառնալիք իրենց գոյության համար: Չնայած ազերիները մեծամասամբ շիա դավանանքին են պատկանում, սակայն թուրքական ժողովուրդ են: Թեհրանը վախենում է, որ Իրանում բնակվող շուրջ 16 միլիոն ադրբեջանցիները, որոնք կազմում են երկրի բնակչության 24 %-ը, կարող են փորձել միավորվել իրենց մայր երկրին: «Մեծ Ադրբեջան»-ը հրեշավոր ուրվական է: Իրենց հերթին հարավկովկասցի ազերիները՝ մեծ մասամբ տիպիկ հետխորհրդային աշխարհիկներ ոչ կրոնականներ, հրեաների նման վախենում են իրանցիների կրոնական մոլեռանդությունից: Ամեն դեպքում Ալիևը՝ արատավոր, կոռումպացված աշխարհիկության մարմնավորումը, Թեհրանի թեոկրատների հետ ընդհանրություններ ունի իշխանությունը հակաժողովրդավարական ճանապարհով պահելու բնագոյի հարցում: Դրան ավելանում է ժողովրդագրականը: Ըստ հրեական կազմակերպությունների՝ Ադրբեջանում բնակվում են մինչև 16.000 հրեաներ, որոնց հիմնականում չեն անհանգստացնում:

Բոլոր դեպքերում, Կասպից ծովի մոտ գտնվող երկիրը Երուսաղեմի ռազմավարներին առարկայանում էր որպես իդեալական գործընկեր: Իսրայելը

վաղուց ճանաչել է Ադրբեջանի անկախությունը: 1992 թ. կողմերի միջև հաստատվել են դիվանագիտական հարաբերություններ, իսկ 1993 թ. Իսրայելը դեսպանություն է հիմնել Բաքվում: Ադրբեջանը նավթ է ուղարկում, որը հատուցում է Իսրայելի պահանջարկի մեկ երրորդը: Իսրայելը շնորհակալություն է հայտնում զենքերով: Իսրայելը Ադրբեջանի հինգերորդ խոշորագույն առևտրային գործընկերն է: Տարիներ ի վեր ուղիղ թռիչքներ են իրականացվում Թել Ավիվի և Բաքվի միջև: Իսրայելի՝ սպառազինություն արտադրող գործարաններում պատրաստություն են անցել ադրբեջանցի հատուկ ջոկատներ, այդ գործարանները տեխնիկապես ապահովել են Բաքվի օդանավակայանը և արդիականացնում են խորհրդային հնացած զրահամեքենաները:

Ըստ «Foreign Policy»-ի 2012 թ. մի զեկույցի՝ Իսրայելը ռազմաօդային ուժերի բազա է պահում Բաքվից դեպի հյուսիս-արևմուտք շուրջ 50 կիլոմետր հեռավորությամբ և ըստ այդմ՝ Իրանի սահմանից 200 կմ-ից էլ նվազ հեռավորության վրա գտնվող Միտալչայ քաղաքում: Բացի այդ, իսրայելցի զիտակների համոզմամբ վճռված է, որ Մոսադի գործակալներն ապահովության համար Ադրբեջան տանեն միջուկային ծրագրի վերաբերյալ փաստաթղթերը, որոնք նրանք գողացել են իրանցիներից երկու տարի առաջ:

### **Էրդողանը՝ որպես դաշնակից**

Փոխարենը դժվարին են հարաբերությունները Հայաստանի հետ: Պատմաբան Բենի Մորիսը զրույցի ժամանակ դրա համար նշում է երեք պատճառ: Առաջինը «հայկական թաքնված հակասեմականությունն» է, որը, ինչպես քրիստոնեական հակասեմիտիզմը, կարծր է և անբարենպաստ կերպով հակադրվում է հրեականության հետ ազերիների «խաղաղ հարաբերությանը»: Երկրորդ՝ այն «ամոթալի փաստը», որ Իսրայելի կառավարությունը մինչ օրս չի ուզում Հայոց ցեղասպանությունը որպես այդպիսին բնորոշել: Եվ երրորդ՝ Երևանի մերձավորությունը Պուտինի հետ, որին իսրայելցիները չեն վստահում:

Իսրայելի եռանդուն աջակցությունն Ադրբեջանին ունի մեկ այլ գրոտեսկային հետևանք: Այն հրեաների պետությանը փաստացիորեն կողմնորոշում է դեպի Թուրքիա, որն ամենասերտ կերպով կապված է Բաքվի ռեժիմի հետ: «Մեկ ազգ, երկու

պետություն», - սիրում էր ասել Հեյդար Ալիևը՝ ներկայիս նախագահի հայրը: Իսրայելն այսպիսով դաշինքի մեջ է Էրդոդանի Թուրքիայի հետ, որը Նեթանյահուին «Հիտլեր» անվանեց և որը «դահիճ» է Իսրայելի կառավարության ղեկավարի համար: Անկարայի և Երուսաղեմի միջև կլիման, որը 15 տարի առաջ դեռ միանգամայն պարզ էր, պղտորվել է: Վիճում են այն ամենի շուրջ, ինչի շուրջ կարելի է վիճել՝ պաղեստինցիների նկատմամբ վերաբերմունքի, Երուսաղեմի կարգավիճակի, Միջերկրական ծովում բնական գազի և Լիբիայում հակամարտության լուծման, որտեղ ևս Էրդոդանը հաջողությամբ միջամտեց և օգնեց Տրիպոլիին հաղթել ռազմապետ Խալիֆա Հաֆթարին: Իսրայելը սատարում էր Հաֆթարին: Դե ինչ, Լեռնային Ղարաբաղում թշնամիները դարձել են զինակիցներ:

### **Բարոյականությունն ընդդեմ «realpolitik»-ի**

Բաքվին աջակցությունը բողոքի տեղիք է տվել ոչ միայն հայերի, այլև հրեաների շրջանում: Նոսա Խոմսկին կարծում է, որ Իսրայելը շահագրգռված է միայն զենքերի վաճառքով: «Նրանք վաճառում են դրանք ցանկացածին, միևնույն է, թե ում դրանք կսպանեն»: Բենի Մորիսն իր հերթին հրաժարվում է ընդունել այդ տեսակետը: Նա դրանում տեսնում է «Realpolitik»-ի գործադրումը, մի ուժի, որն այս դեպքում գերիշխող դիրք ունի «բարոյականության աշխարհի» նկատմամբ: Նրա համոզմամբ՝ Իսրայելի պարագայում առաջին հերթին խոսքը վերաբերում է աշխարհաքաղաքական-ռազմավարական շահերին և միայն դրանից հետո՝ փողին: «Նեթանյահուն ցանկանում է ամուր դիրք գրավել Իրանի սահմանին», - նշում է Մորիսը: Բայց նրա կարծիքով՝ նշված բացատրությունը չի արդարացնում Իսրայելին: «Հայերն ու հրեաները «որպես զոհեր եղբայրներ են», - ասում է նա, «եթե կա մի ժողովուրդ, որն արժանի է Իսրայելի համակրանքին, հայերն են»: 13 այլ մտավորականների հետ միասին Մորիսը ստորագրել է մի ուղերձ, որում կառավարությանը կոչ է արվում դադարեցնել զենքի մատակարարումը Ադրբեջանին: Դա ոչ մի ազդեցություն չունեցավ: Հոկտեմբերին Գերագույն դատարանը մերժեց նաև այն միջնորդությունը, որով իրավապաշտպան Էլի Յոսեֆը ցանկանում էր արգելել զենքի մատակարարումը Բաքվին:

Եթե քարոյական ակնոցը մի կողմ դնենք, ապա պարզ կդառնա, որ Իսրայելը գործում է վիճելի, բայց ռազմավարական տեսանկյունից՝ հետևողական կերպով: Իսլամական ազգերի հետ գործարքները ո՛չ տարու են, ո՛չ էլ՝ նորություն: Եգիպտոսի և Հորդանանի հետ խաղաղություն է հաստատվել, Արաբական Միացյալ Էմիրությունների, Բահրեյնի և Սուդանի հետ կարգավորման համաձայնագրերը կարող են փոխել Մերձավոր Արևելքի հայացքները, դաշինքները և, ի վերջո, նույնիսկ աշխարհագրական քարտեզը: Ինչո՞ւ պետք է Ադրբեջանը անմասն մնա: Գործուն ռաբբին Մարկ Շնայերը դեռ 2019 թ. հունվարին հայտարարեց, որ Իսրայելն ու արաբներ իրապես միմյանց լավագույն կերպով հասկանում են: Հիմա նա դա հաստատված է տեսնում և ասում է, որ հենց Բաքվի հետ ունեցած այս առանձնահատուկ հարաբերություններն էին, որոնք օրինակ են ծառայել ծոցի արաբների և Սուդանի հետ համաձայնագրերի ստորագրման համար: Նեթանյահուն, անշուշտ, նաև ամերիկացիների գովասանքի առարկան է: 1990-ականն թթ. սկզբից ի վեր Վաշինգտոնը քաջալերում է իսրայելա-ադրբեջանա-ամերիկյան դաշնակցությունը: Դա չի փոխվի նաև Ջո Բայդենի օրոք:

*Տպագրվել է «Neue Zürcher Zeitung»-ում, 25. 11. 2020*